

## ԲԱՆՔԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՆԴԵՍԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ

- Ներկայացվող հոդվածի ծավալը շպես է գերազանցի 40.000 նիշը՝ ներառյալ բացատները, հրապարակումներին՝ 80.000 նիշը:
- Հոդվածին և ամփոփումներին վերնագրից հետո պես է նախորդեն բանալի բառեր՝ թիվ 8-10:
- Հոդվածին պես է հետևի ամփոփում՝ անգլերեն (ֆրանսերեն, գերմաներեն) և ռուսերեն՝ 100-300 բառ ծավալով: Այլալեզու հոդվածների դեպքում ամփոփումները համապատասխանաբար հայերեն են և երրորդ լեզվով: Ամփոփման վերնագիրն ու հեղինակի անունը ձևավորել ինչպես հոդվածի հիմնական բնագրում՝ առանց «Ամփոփում», “Резюме”, “Summary” և նման նշումների:
- Հայերենի համար օգտագործել AMM MairTcutcak (unicode) տառատեսակը: Խոսերեն և լատինատառ մասերը շարել Times New Roman տառատեսակով: Հիմնական բնագրի տառեր՝ շեղ (italic), շափը՝ 12, տողատակինը՝ ուղիղ, շափը՝ 10:
- Հայերեն հասունականություններն ու եղբերը լատինատառ տառադարձելիս հետևել Library of Congress Romanization Table-ին՝

ա – a	բ – b	զ – g	դ – d	ե – e	զ – z	է – ē	ը – ě	թ – t'	ժ – zh
ի – i	լ – l	խ – kh	ծ – ts	կ – k	հ – h	ձ – dz	ղ – gh	ճ – ch	մ – m
յ – y	ն – n	շ – sh	օ – o	չ – ch'	պ – p	ջ – j	ռ – ɾ	ս – s	վ – v
ւ – t	ր – r	ց – ts'	ւ – w	փ – p'	ֆ – k'	ււ – ew	օ – օ	ֆ – f	

- Աշխատությունների տողատակի հղումներում կիրառել միջազգայնորեն ընդունված հետևյալ ձևերը.
  - Գրերի և պարբերականների վերնագրերը գրել շեղատառ (italic):
  - Հոդվածների (և գրերի գլուխների) վերնագրերը՝ ուղիղ (ոչ շեղ), շակերտների մեջ:
  - Շարերի վերնագրերը գրել փակագծերում ուղիղ՝ հրապարակման վայրից առաջ:
  - Աշխատությանը վերաբերող տվյալներն իրարից բաժանել ստորակետով:
  - Նույն աշխատության կրկին վկայակոչման դեպքում նշել միայն հեղինակին և վերնագիրը կամ նամաշելի ձևով այն համառոտել:

- գ. Եթե կրկին վկայակոչումն անմիջապես հաջորդում է առաջինին, գրել «Նոյն տեղում» և էջահամարը (եթե փոխվել է): Եթե հաջորդաբար նոյն հեղինակի տարբեր աշխատություններ են նշվում, գրել՝ «նոյնի» և աշխատության տվյալները:
- է. Սրանց գումարվում է ***ԲՄ*-ում** ավանդական դարձած **հեղինակի անունը թավ** (**bold**), իսկ **խմբագրի, կազմողի, թարգմանչի անունը թավ և շեղ** (**bold + italic**) գրելու պահանջը:

Օրինակներ՝

**Դափիք Անյաղը,** Ասհմանք իմաստափութեան, համահալաք քննական բնագիրը, թարգմանությունը գրաբարից ոռուելեն, առաջաբանը և ծանոթագրությունները **Ս. Ս. Արևշատյանի**, Երևան, 1960, պրակֆ ժե., էջ 132:

Paul J. Alexander, “Medieval Apocalypses as Historical Sources,” *American Historical Review*, 73, 1968, p. 998:

**Մովսէս Կաղանկառուացի,** Պատմութիւն Աղուանից աշխարհի (ՄՀ<sup>1</sup>, ԺԵ. հատոր, Ժ. դար), Երևան, 2011, էջ 27-437

**Philonis Alexandrinii Quaestiones in Genesim et in Exodus. Fragmenta Graeca**, ed. **F. Petit** (Les oeuvres de Philon d'Alexandrie 33), Paris, 1978

7. Հաճախակի հոդվող աղբյուրների համար մշակել համառոտագրություններ, որոնց ցանկը կցել հոդվածի վերջում:
8. Գիշավոր հավաքածուներում պահվող հայերեն ձեռագրերը հիշատակել հետևյալ հապավումներով.

**ՄՄ 1746 (Մաշտոցի անվան Մատենադարան):**

Եղմ. 1903 (Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց վանք):

Վնտկ. 456 (Վենետիկի Մխիթարյան միաբանություն):

Վիեն. 2159 (Վիեննայի Մխիթարյան միաբանություն):

Փրզ. 58 (Փարիզ, Ֆրանսիայի Ազգային գրադարան):

(Մնացած հավաքածուների համար հապավումներ կմշակվեն ըստ անհրաժեշտության: Առաջարկում ենք ծանոթանալ հետևյալ կայֆեզում զետեղված և միջազգայնորեն կիրառվող հապավումներին՝ Coulie, *Liste des sigles utilisés pour désigner les manuscrits* (Coulie – 2002), <http://sites.uclouvain.be/aiea/wp-content/uploads/2014/03/Sigles.pdf>):

---

<sup>1</sup> = Մատենագիրք հայոց: Այլ հանրահայտ հապավումներ են ՊԲՀ = Պատմաբանասիրական հանդես, ԲՄ = Բանբեր Մատենադարանի, ՀԱ = Հանդէս ամսօրեայ, ԼՀԳ = Լրաբեր հասարակական գիտությունների, ԲԵՀ = Բանբեր Երևանի համալսարանի, REArm = Revue des Études Arméniennes: